ԿԱՐԾԻՔ

Գոհար Բերկայի Երիցյանի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով ԺԳ. 00.01.- «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության վերաբերյալ:

Հայտնի է, որ ժամանակակից մանկավարժության առջև ծառացած կարևորագույն հիմնահարցերից է ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության արդյունավետ ուղիների բացահայտումը, որին էլ նվիրված է Գոհար Երիցյանի ատենախոսական հետազոտությունը: Այս տեսանկյունից գրախոսվող ատենախոսությունն արդիական հնչեղություն ունեցող սոցիալ-մանկավարժական հետազոտություն է,

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գրականության ցանկից, հավելվածներից, ներառում է աղյուսակներ, տրամագրեր, նկարներ:

Ներածության մեջ հիմնավորված է հետազոտության արդիականությունը, ներկայացված են հետազոտության բաղադրիչները՝ օբյեկտը, առարկան, նպատակը, հետազոտության խնդիրները, վարկածը, մեթոդները, գիտատեսական ու գործնական նշանակությունը, պաշտպանությանը ներկայացվող հիմնադրույթները, որոնք բովանդակային առումով համապատասխանում են և տրամաբանորեն հիմնավորված արտացոլված են եզրակացություններում:

Ատենախոսության առաջին գլխում դիտարկված և վերլուծված են կրտսեր դպրոցականի տարիքային և անհատական առանձնահատկությունները: Ներկայացվել են նաև կրտսեր դպրոցականի զարգացման վրա ազդող հիմնական գործոնները, ինչպես նաև անձի զարգացման տարիքային շրջաբաժանումները, դրանց վերաբերյալ տեսական հայեցակարգերը:

Ատենախոսը հանգամանալից ու հիմնավորված մեկնաբանել է «ուսումնական դժվարություն» հասկացությունը և բնութագրել իրականացված հետազոտությամբ բացահայտված կրտսեր դպրոցականի ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառները:

Առանձնակի գիտեսական արժեք է ներկայացնում ատենախոսության երրորդ ենթագլխում քննարկված կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացին պատրաստվածության և միջանձնային հարաբերությունների (աշակերտ-աշակերտ,ուսուցիչ-աշակերտ,...) փոխկապակցվածության խնդիրը, որպես դիտարկվող գործընթացում էական նշանակություն ունեցող գոծոն:

Չորրորդ ենթագլխում հիմնավորվել է հետազոտությամբ բացահայտված կրտսեր դպրոցականների առաջադիմության և ներընտանեկան հարաբերությունների փոխկապակցվածությունը և դրանց ազդեցությունը կրտսեր դպրոցականների արժեքների ձևավորման, ուսումնական մոտիավացիայի և առաջադիմության վրա:

Հինգերորդ ենթագլխում ներկայացվել են տարբեր ժամանակաշրջաններում ուսումնառության արդյունքների գնահատման ձևերը, տարբեր մանկավարժ-գիտնականների մոտեցումները, ինչպես նաև հանրակրթության պետական նոր չափորոշչի փոփոխությամբ պայմանավորված ուսումնառության արդյունքների գնահատման նոր համակարգը:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին և երկրորդ ենթագլուխներում ներկայացված են դպրոց-ընտանիք համագործակցությունը որպես ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղի՝ կարևորելով դրա ազդեցությունը կրտսեր դպրոցականների ուսումնական գործընթացի արդյունավետության վրա:

Որպես հետազոտության գիտական նորույթ մենք արժևորում ենք ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրելու պատճառների բացահայտումը, երրորդ, չորրորդ, հինգերրորդ, վեցերերդ ենթագլուխներում ատենախոսի կողմից առաջարկվող ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները՝ տարբերակված ուսուցումը, երկարօրյա ուսուցումը, մշտադիտարկումը, կրթական

ռեսուրսների ներդրումը, որոնք հետազոտությամբ և գիտականորեն հիմավորվել են ատենախոսի կողմից:

Երրորդ գլխում ներկայացված են իրականացված հետազոտական աշխատանքների ընթացքն ու արդյունքները, որոնք հիմնավորում են հեղինակի հետազոտության արդյունքները, ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության առաջարկված ուղիների կիրառման նպատակահարմարությունը և արդյունավետությունը՝ հավաստելով հետազոտության առաջադիր վարկածը:

Ատենախոսական աշխատանքն առանձնանում է հատկապես գործնական հագեցվածությամբ: Ատենախոսը մշակել է մի շարք կրթական ռեսուրսներ, տարամակարդակ առաջադրանքներով աշխատանքային տետրեր, վարժություններ, հանձնարարականներ, որոնց ներդնումը հետազոտության բազա հանդիսացած հանրակրթական դպրոցներում էականորեն նպաստել է կրտսեր դպրոցականների ուսումնառության ընթացքում առաջացած դժվարությունները հաղթահարելուն՝ հնարավորություն ընձեռելով նրանց յուրացնել դասանյութը նշված առարկաներից: Հատկանշական է այն, որ ատենախոսն այդ ամենը կիրառել է գործնականում և առանձնացրել դրանց գործածման մի շարք նրբություններ:

Այս տեսանկյունից ատենախոս Գոհար Երիցյանն առանձնանում է իր ստեղծագործական և նորարար մոտեցմամբ, ինչը փաստում են նաև իր կողմից մշակված և կիրառված Storyjumper գործիքով ստեղծված թվային գրքերը:

Ատենախոսության մեջ ակնհայտ են հեղինակի հետազոտական և մասնագիտական կարողությունները, անձնական ներդրումը հատկապես կրթական բազմաբովանդակ թվային ռեսուրսների մշակման ոլորտում: Դրանք հավաստի են դարձնում հետազոտության արդյունքների արժանահավատությունն ու հիմնավորվածությունը, մանավանդ որ տևական ժամանակ կիրառվել են հանրակրթական դպրոցում և ունեցել արդյունավետության բարձր ցուցանիշներ:

Ատենախոսությունը ամբողջական, ինքնուրույն, արդիական հնչեղություն ունեցող տեսական և կիրառական հետազոտություն է, որն արտացոլում է հեղինակի

հոգեբանամանկավարժական, մասնագիտական գիտելիքները, գիտահետազոտական ինքնուրույն աշխատանք կատարելու կարողությունները:

Եզրակացությունները տրամաբանորեն բխում են կատարած հետազոտության և ատենախոսության հիմնական դրույթներից: Դրանք արտացոլված են նաև ատենախոսի թվով յոթ հրապարակումներում:

Նշվածի կողքին հարկ ենք համարում առանձնացնել որոշ դիտարկումներ.

1. Հետազոտության նպատակը պետք է առջինը սահմանվեր, որից բխում են հետազոտության օբյեկտը և առարկան:
2. Պաշտպանության ներկայացված դրույթները լիաժեքորեն չեն արտացոլում ատենախոսի իրականացրած բարձրարժեք, լանածավալ հետազոտության գիտագործնական նշանակությունը և խմբագրման կարիք ունեն:
3. Դիտարկվող հիմնախնդրի տեսանկյունից շահեկան կլիներ բնութագրվեին կրտսեր դպրոցականների ուսումնական գործունեության առանձնահատկությունները, որոնցից միայն տարիքային, անհատական առանձնահատկություններն են դիտարկված:
4. Ատենախոսությունում հետազոտական խնդիր է դրված սահմանել «ուսումնական դժվարություններ» հասկացությունը, որն ատենախոսի կողմից այդպես էլ չի սահմանվել և բավարարվել է Հանրակրթության պետական չափորոշում նշված չափանիշի ներկայացմամբ, էջ 30:
5. Կառուցվածքային և բովանդակային առումով ճիշտ չենք համարում երկրորդ գլխի առաջին և երկրոդ ենթագլուխներում նույն հիմնահարցը դիտարկելը. ճիշտ կլիներ դրանք դիտարկվեին մեկ ենթագլխում, ինչպես նաև առաջարկվող մանկավարժական ուղիների առանձին-առանձին ենթագլուխներով ներկայացնելը:
6. Աշխատանքի շարադրանքում առկա են ավելորդաբանություններ, կրկնություններ, որոնք ծանրացնում են բովանդակությունը, ինչպես նաև համակագչային վրիպակներ:

Մեր կողմից արված դիտողությունները բոլորովին չեն նվազեցնում ատենախոսության գիտական արժեքը: Այն ավարտուն, ինքնուրույն հետազոտական աշխատանք է:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Գոհար Բերկայի Երիցյանի «Ուսումնառության ցածր արդյունքներ արձանագրած կրտսեր դպրոցականներին տրամադրվող մանկավարժական աջակցության ուղիները» խորագրով ատենախոսությունը համապատասխանում է ՀՀ գիտական աստիճանավորման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին, ԲԿԳԿ-ի կողմից ԺԳ.00.01. «Մանկավարժության տեսություն և պատմություն» մասնագիտությամբ մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է հայցած գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝
մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝

Լ.Թ. Ասատրյան

Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լ.Թ. Ասատրյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտական քարտուղար,
մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ՝ Հ. Թադևոսյան

27. 04. 2026թ.